

СЕДА АЛИХАНИЯН

АНАЛИЗ ИНДИКАТОРОВ ДЕНЕЖНОГО РЫНКА РА 2008-2017

Ключевые слова: денежный рынок, рыночная экономика, валютная сфера, финансовая стабильность.

Учитывая важную роль денежного рынка в обеспечении финансовой стабильности, в статье проанализировались численные и качественные показатели денежного рынка характеризующие предложение денег, представлялись факторы влияющие на спроса денег в РА.

SEDA ALIKHANYAN

ANALIZE OF MONEY MARKET INDICATORS OF RA 2008-2017

Key word: money market, market economy, monetary sphere, financial stability.

Considering importance of maney market in providance of financial stability in the article are analized quantative and qualitative indicators characterising supply of money and performed factors affecting on demand of money in RA.

ԼՈՒՍԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Տնտեսության վիճակագրական
վերլուծություն և կանխատեսում,
մազիստրատորա, 1-ին կուրս

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հիմնաբառեր. պետական պարտք, արտաքին պետական պարտք, ներքին պետական պարտք

Տնտեսական գլոբալացման պայմաններում աշխարհի շատ երկրներ, իրականացնելով տնտեսական վերափոխումներ, դիմում են արտաքին ֆինանսավորման աղբյուրների օգնությանը: Պետական պարտքը պետության տնտեսական ռազմավարության իրագործմանը նպաստող, բյուջեային կարգավորման կարևորագույն գործիքներից մեկն է: Պետական փոխառությունը բյուջեային պակասուրդի ֆինանսավորման հզոր ոչ գնաճային աղբյուր է: Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները առանձնակի կարևորություն ձեռք բերեցին 2007-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի համալուծում, երբ պետական պարտքի կառավարման իրավիճակային ու կարճաժամկետ հատվածում, առավելագույն արդյունքի ստացման նպատակադրումների վրա կառուցված քաղաքականությունը, առանձին երկրների ֆինանսական համակարգի կազմալուծման ու պետության դեֆոլտի իրական վրանգի առջև կանգնեցրեց: ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման խնդիրը առավել սուր և հարկանշական է ինչպես ազգային տնտեսության զարգացման հեռանկարների, այնպես էլ համաշխարհային տնտեսական համակարգում սեփական դիրքերի պահպանության տեսանկյունից:

2008-2017 թթ. պետական պարտքը բացարձակ մեծությամբ ավելացել է 2291 մլրդ դրամով, իսկ հարաբերական մեծությամբ գրեթե եռապատկվել է՝ ՀՆԱ 16.4%-ից հասնելով 56.2%-ի:

Այսպես, եթե 2000 թ. ՀՀ պետական պարտքի մեծությունը դրամային և դոլարային արտահայտությամբ կազմել է համապատասխանաբար 504.4 մլրդ և 913.5 մլն, ապա 2017 թ.՝ 3279.6 մլրդ և 6774.6 մլն: Այսինքն, եթե դրամային արտահայտությամբ պարտքի մեծությունն աճել է 6.5 անգամ, ապա դոլարային արտահայտությամբ՝ ավելի քան 7.4 անգամ: Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ դրամային և դոլարային արտահայտությամբ պետական պարտքի շարժընթացում նկատվում են որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են արտարժույթային փոխարժեքների տատանումներով: Այսպես, եթե դոլարային արտահայտությամբ պետական պարտքի մեծությունը նվազման միտումներ է ցույց տվել 2005 և 2014 թթ., ապա դրամային արտահայտությամբ՝ 2004-2006թթ.: ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ներքին պետական պարտքի տեսակարար կշիռը, որոշ բացառություններով, կայուն նվազման միտումներ է ցուցաբերել, թեև պետական պարտքի գերակշիռ մասը՝ ավելի քան 80%-ը, շարունակում է բաժին ընկնել արտաքին պարտքին:

Աղյուսակ 1

**ՀՀ պետական պարտքի շարժընթացը 2000-2017 թթ.
(մլն ԱՄՆ դոլար, մլրդ ՀՀ դրամ)¹**

Տարիներ	ՀՀ պետական պարտք, մլրդ դրամ	Աճը նախորդ տարվա համեմատ, %	ՀՀ պետական պարտք, մլն դոլար	Աճը նախորդ տարվա համեմատ, %
2000 թ.	504.4	-	913.4	-
2001 թ.	545.2	108.9	970.5	106.5
2002 թ.	640.6	117.50	1095.2	112.85
2003 թ.	664.4	103.72	1173.9	107.19
2004 թ.	621.1	93.48	1278.5	108.91
2005 թ.	546.2	87.94	1213.2	94.89
2006 թ.	508.9	93.17	1400	115.40
2007 թ.	516.2	101.43	1696.9	121.21
2008 թ.	584.6	113.25	1906.1	112.33
2009 թ.	1270.7	217.36	3362.5	176.41
2010 թ.	1379.3	108.55	3795.1	112.87
2011 թ.	1592.7	115.47	4128.6	108.79
2012 թ.	1764.5	110.79	4372.1	105.90
2013 թ.	1861.3	105.49	4588.1	104.94
2014 թ.	2109.6	113.34	4441.5	96.80
2015 թ.	2456.3	116.43	5077.7	114.32
2016 թ.	2875.6	117.1	5942.1	117.0
2017 թ.	3279.6	114.04	6774.6	114.01

ՀՀ ներքին և արտաքին պետական պարտքի փոփոխությունների 2000-2017 թթ. շարժընթացը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Ըստ այդ տվյալների՝ ՀՀ ներքին պետական պարտքի մեծությունը ինչպես դրամային, այնպես էլ դոլարային արտահայտությամբ 2000-2016 թթ. կայուն աճի միտում է ցուցաբերել: 2014 թ. նկատվում է դոլարային արտահայտությամբ պետական պարտքի մեծության որոշակի նվազում, որը պայմանավորված է արտարժույթային շուկայում 2014 թ. նոյեմբեր-դեկտեմբեր

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը» տարեկան հաշվետվություն 2007-2016 թթ.:

ամիսներին դրսևորված անկայունությամբ և չի արտահայտում երևույթի ընդհանուր տրամաբանությունը:

Դիտարկվող ժամանակահատվածում ներքին պետական պարտքի շարժընթացում կարելի է պայմանականորեն առանձնացնել երեք ժամանակաշրջան: **Առաջին** ընդգրկում է 2000-2003 թթ., երբ ներքին պարտքի աճի տեմպը շատ ավելի ցածր էր արտաքին պարտքի աճի տեմպից, ինչի հետևանքով ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշիռը որոշակիորեն նվազեց: **Երկրորդ** ժամանակահատվածը՝ 2004-2007 թթ., աչքի է ընկնում ներքին պարտքի ծավալային ցուցանիշների առաջանցիկ աճով (տարեկան միջինը 15.7%) և պետական պարտքի կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշռի էական ավելացմամբ (7.5%-ից մինչև 14.6%): **Երրորդ** ժամանակահատվածում՝ 2008-2017 թթ., ներքին պարտքի մեծությունը, նախորդ երկու ժամանակահատվածների համեմատ, ավելացել է շատ ավելի բարձր տեմպով (տարեկան միջինում 25.4%), ինչը սակայն պետական պարտքի կառուցվածքում ներքին պարտքի մասնաբաժնի փոփոխության չի հանգեցրել: Այսինքն, ներկայումս ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշիռը (և ինչ-որ իմաստով դերակատարությունը) նույնն է, ինչ մինչգնաժամային ժամանակահատվածում:


Աղյուսակ 2

ՀՀ ներքին և արտաքին պետական պարտքի շարժընթացը 2000-2017թթ.(մլրդ ՀՀ դրամ, մին ԱՄՆ դոլար)¹

Տարի-ներ	Ներքին պետական պարտք, մլրդ դրամ	Աճը նախորդ տարվա համեմատ, %	Ներքին պետական պարտք, մլն դոլար	Աճը նախորդ տարվա համեմատ, %	Արտաքին պետական պարտք, մլրդ դրամ	Աճը նախորդ տարվա համեմատ, %	Արտաքին պետական պարտք, մլն դոլար	Աճը նախորդ տարվա համեմատ, %
2000 թ.	29.8	-	54.0	-	474.6	-	859.5	-
2001 թ.	26.4	88.6	64.8	120	508.8	107.2	905.7	105.4
2002 թ.	40.8	154.5	69.8	107.7	599.8	117.9	1025.5	113.2
2003 թ.	43.1	105.6	76.1	109.0	621.3	103.6	1097.7	107.0
2004 թ.	46.4	107.7	95.5	125.5	574.7	92.5	1183.0	107.8
2005 թ.	51.3	110.6	113.9	119.3	494.9	86.1	1099.3	92.9
2006 թ.	70.7	137.8	194.5	170.8	438.2	88.5	1205.5	109.7
2007 թ.	75.4	106.6	247.9	127.5	440.8	100.6	1449.0	120.2
2008 թ.	100.9	133.8	329.0	132.7	483.7	109.7	1577.1	108.8
2009 թ.	149.6	148.3	395.0	120.1	1121.1	231.8	2966.7	188.1
2010 թ.	183.9	122.9	506.0	128.1	1199.5	107.0	3300.5	111.3
2011 թ.	218.5	118.8	566.4	111.9	1376.9	114.8	3569.3	108.1
2012 թ.	255.8	117.1	633.8	111.9	1509.0	109.6	3739.1	104.8
2013 թ.	279.6	109.3	689.3	108.8	1581.6	104.8	3899.1	104.3
2014 թ.	311.7	111.5	656.3	95.2	1797.9	113.7	3785.2	97.1
2015 թ.	368.4	118.2	761.5	116.0	2088.0	116.1	4316.2	114.0
2016 թ.	550.0	149.3	1136.5	149.2	2325.6	111.4	4805.6	111.3
2017 թ.	619,5	112.6	1279,7	112.6	2660.1	114.4	5494.9	114.3

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը» տարեկան հաշվետվություն 2004-2016 թթ.:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարման նպատակով արտաքին փոխառությունների իրականացման արդյունքում 2009 թ. հանրապետության արտաքին պարտքը, 2008 թ. համեմատ, ավելացավ շուրջ 1.39 մլրդ դոլարով կամ 88.1%-ով՝ կազմելով 2.95 մլրդ դոլար: Նույն համեմատականում արտաքին պետական պարտքը դրամային արտահայտությամբ ավելացել է 122.1 տոկոսային կետով: Դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում արտաքին պետական պարտքի մասնաբաժինը պետական պարտքի կառուցվածքում նկատելի վայրիվերումներ է արձանագրել՝ նվազման ընդհանուր միտման գերակայությամբ: Մինչև 2005 թ. սույն ցուցանիշը գերազանցել է 90%-ը՝ առավելագույնը արձանագրելով 2000 թ. (94.1%): 2004-2008 թթ. ցուցանիշը նվազել է շուրջ 10 տոկոսային կետով՝ 2008 թ. իջնելով մինչև 82.2%, ինչը պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուրների ավելի ակտիվ օգտագործման քաղաքականության անմիջական արդյունքն է: Թեև ներքին պետական պարտքի ծավալները բավականին զիջում են արտաքին պարտքին, այնուհանդերձ, 2000-2017 թթ. ընթացքում ներքին պետական պարտքի տեսակարար կշիռն ընդհանուր պարտքի մեջ ավելացել է ավելի քան 2 անգամ: Այս երևույթն առաջին հերթին կապված է պետական պարտատոմսերի շուկայի զարգացման, ներքին ֆինանսական, այդ թվում՝ բորսայական շուկայի աշխուժացման, ինչպես նաև պետական պարտատոմսերի մանրաձախ վաճառքի համակարգի դրական միտումների հետ:



Գծապատկեր 1. ՀՀ արտաքին և ներքին պետական պարտքի համեմատական ցուցանիշները 2000-2017 թթ.¹

Ներքին պարտքի տեսակարար կշռի ավելացումը վկայում է ներքին պետական պարտատոմսերի նկատմամբ վստահության աճի մասին: Պետական պարտքի զարգացման միտումները (մասնավորապես՝ ըստ ներքին և արտաքին պարտքի) և օրինաչափությունները բնութագրելու համար կատարվել է վերլուծական հարթեցում տրենդային տարբեր մոդելների միջոցով, որոնք ներկայացված են աղյուսակ 3-ում: Նշված մոդելներից լավագույնի ընտրությունը կատարվել է ըստ դետերմինացման գործակցի մեծության:

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը» տարեկան հաշվետվություն, 2004-2015 թթ.: // ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 116:

Աղյուսակ 3

Պետական պարտքի տրենդային հավասարումներ

Հավասարման տեսակները	Արտաքին պարտք		Ներքին պարտք	
	Տրենդային հավասարումը	R^2	Տրենդային հավասարումը	R^2
Գծային	$y = -89.071 + 280.01t$	0.919	$y = -189.93 + 66.017t$	0.896
Լոգարիթմա- կան	$y = -686.62 + 1611.1 \ln(t)$	0.686	$y = -315.93 + 372.48 \ln(t)$	0.643
Քառակուսա- յին	$y = 74.24 + 596.83t + 10.83t^2$	0.948	$y = 61.663 - 9.4628t + 3.9726t^2$	0.966
Աստիճանային	$y = 479.22t^{0.7232}$	0.782	$y = 23.001t^{1.2369}$	0.877
Էքսպոնեն- ցիալ	$y = 672.15e^{0.1204t}$	0.935	$y = 43.963e^{0.1951t}$	0.967

Ելնելով 2000-2017 թթ. արտաքին և ներքին պարտքի զարգացման օրինաչափություններից և դետերմինացման գործակցի ընդունած արժեքից՝ նպատակահարմար է ընտրել երկրորդ կարգի պարաբոլը: Հիմք ընդունելով, որ երևույթի զարգացման միտումը կախականվի նաև ապագայում, ընտրված աճի կորի վրա կատարենք էքստրապոլյացիա, որի հիմքում երևույթի զարգացման ինտերգրոնության հատկությունն է: Կանխատեսման ստացված արդյունքները ներկայացված են աղյուսակ 4-ում: Ըստ կանխատեսման տվյալների՝ 2020 թ. արտաքին պետական պարտքը կկազմի 6932 մլն դոլար: Համանման սկզբունքով 2018-2020 թթ. կանխատեսումը կատարվել է նաև ներքին պետական պարտքի համար, որի արդյունքները ևս ներկայացված են աղյուսակ 4-ում: Համաձայն կանխատեսման արդյունքների՝ 2020 թ. ներքին պարտքը կկազմի 1615 մլն դոլար:


Կատարված վերլուծությունից պարզ է դառնում, որ 95% հավանականությամբ կարելի է արձանագրել՝ ՀՀ արտաքին պետական պարտքը 2020 թ. կլինի ոչ պակաս, քան 6106.6 և ոչ ավելի, քան 7757.4 մլն դոլար, իսկ ներքին պետական պարտքը՝ ոչ պակաս, քան 1454.5 և ոչ ավելի, քան 1775.5 մլն դոլար: Երկրի պետական պարտքի գնահատման կարևորագույն ցուցանիշներից է պարտքի բեռը: ՀՀ-ում վերջին 13-14 տարիներին պետական պարտքն աճել է մոտ 5 անգամ (2000 թ. 913.4 մլն դոլարի փոխարեն 2017 թ. կազմել է 6774.6 մլն դոլար), սակայն ի հաշիվ տնտեսական համարժեք զարգացումների, ՊՊ/ՀՆԱ հարաբերակցությունն էականորեն չի փոխվել: Այս ժամանակահատվածում պարտքի բեռը, դրամով արտահայտված, չի գերազանցել պարտքի ցածր բեռի վերին սահման համարվող 50%-ը: Պարտք/ՀՆԱ հարաբերակցության ամենացածր ցուցանիշն արձանագրվել է 2008 թ.՝ 16.4%, իսկ արդեն 2009-ից կտրուկ աճ է գրանցել՝ պայմանավորված պարտքի ներգրավման ծավալների աննախադեպ աճով (2008 թ. 1906.1 մլն դոլարից ՀՀ պետական պարտքը 2009-ին դարձավ 3362.5 մլն դոլար):

Աղյուսակ 4¹

2018-2020 թթ. արտաքին և ներքին պետական պարտքի կանխադրեում

	Արտաքին պետական պարտք			Ներքին պետական պարտք		
	$\bar{Y}_t$	Y_L	Y_U	$\bar{Y}_t$	Y_L	Y_U
2018	5917	5091.6	6742.4	1316	1155.5	1476.5
2019	6414	5588.6	7239.4	1461	1300.5	1621.5
2020	6932	6106.6	7757.4	1615	1454.5	1775.5

Վերոնշյալ տվյալները հաշվարկված են դոլարային արտահայտությամբ: Դրամային արտահայտությամբ պատկերն ունի մի քիչ այլ միտում: Մասնավորապես, 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 56,2%՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատությամբ ավելանալով 8 տոկոսային կետով²: Պատկերն ավելի քան մտահոգիչ է դառնում 2015 թ. առաջին կիսամյակի տվյալներով, ըստ որի ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գրանցել է ամենավատ ցուցանիշը՝ 51.8%՝ հատելով «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի շեմի լրացուցիչ սահմանափակման 50%-ի շեմը, ինչին էլ հետևեց օրենքի փոփոխությունը, ըստ որի սահմանափակումը վերագրվեց ոչ թե պարտք/ՀՆԱ հարաբերակցությանը, այլ բացառապես կառավարության պարտք/ ՀՆԱ հարաբերակցությանը: Անդրադառնանք պարտքի բեռի և կայունության գնահատման հաջորդ՝ **արտաքին պետական պարտք/ՀՆԱ** հարաբերակցությանը, որի օպտիմալ արժեքը չպետք է գերազանցի 30-35%-ը:



Գծապատկեր 2. 2000-2017 թթ. ՀՀ պետական պարտքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %

¹ Աղյուսակի տվյալները հաշվարկվել են Excel ծրագրային փաթեթի միջոցով:
² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը» տարեկան հաշվետվություն 2015 թ., էջ 6:
³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը» տարեկան հաշվետվություն 2011 թ., էջ 26, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2016 թ., էջ 19// ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 116:

Գծապատկեր 2-ից երևում է, որ 2000-2008 թթ. ընթացքում այս ցուցանիշը ևս դրսևորել է նվազման միտում (բացառությամբ՝ 2002 թ.), սակայն պետք է նշել նաև, որ մինչև 2004 թ. ցուցանիշը գերազանցել է ԱՄՀ թույլատրելի սահմանը: 2008 թ. ԱՊՊ/ՀՆԱ հարաբերակցության՝ արձանագրված գրեթե 3.5 անգամ նվազմանը 2009 թ. հաջորդեց մոտ 2.5 անգամ աճ, որն էլ ավելի խորացավ 2010 թվականից սկսած, և առ այսօր ԱՊՊ/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է թույլատրելի շեմը՝ կազմելով 45.5%: Ուսումնասիրությունների արդյունքում կատարվել են հետևյալ եզրահանգումները.

1. 2008-2017 թթ. պետական պարտքը բացարձակ մեծությամբ ավելացել է 2291 մլրդ դրամով, իսկ հարաբերական մեծությամբ գրեթե եռապատկվել է՝ ՀՆԱ 16.4%-ից հասնելով 56.2%-ի:
2. Այսպես, եթե 2000 թ. ՀՀ պետական պարտքի մեծությունը դրամային և դոլարային արտահայտությամբ կազմել է համապատասխանաբար 504.4 մլրդ և 913.5 մլն, ապա 2017 թ.՝ 3279.6 մլրդ և 6774.6 մլն: Այսինքն, եթե դրամային արտահայտությամբ պարտքի մեծությունն աճել է 6.5 անգամ, ապա դոլարային արտահայտությամբ՝ ավելի քան 7.4 անգամ:
3. ՀՀ ներքին պետական պարտքի մեծությունը ինչպես դրամային, այնպես էլ դոլարային արտահայտությամբ 2000-2017 թթ. կայուն աճի միտում է ցուցաբերել: 2014 թ. նկատվում է դոլարային արտահայտությամբ պետական պարտքի մեծության որոշակի նվազում: Այդ նվազումը պայմանավորված է արտարժույթային շուկայում 2014 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դրսևորված անկայունությամբ և չի արտահայտում երկույթի ընդհանուր տրամաբանությունը:
4. Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարման նպատակով արտաքին փոխառությունների իրականացման արդյունքում 2009 թ. հանրապետության արտաքին պարտքը, 2008 թ. համեմատ, ավելացավ շուրջ 1.39 մլրդ դոլարով կամ 88.1%-ով՝ կազմելով 2.95 մլրդ դոլար: Նույն համեմատականում արտաքին պետական պարտքը դրամային արտահայտությամբ ավելացել է 122.1 տոկոսային կետով:
5. Պարտք/ՀՆԱ հարաբերակցության ամենացածր ցուցանիշն արձանագրվել է 2008 թ.՝ 16.4%, իսկ արդեն 2009-ից կտրուկ աճ է գրանցել՝ պայմանավորված պարտքի ներգրավման ծավալների աննախադեպ աճով (2008 թ. 1906.1 մլն դոլարից ՀՀ պետական պարտքը 2009-ին դարձավ 3362.5 մլն դոլար):

ЛУСИНЕ АРАКЕЛЯН СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ И ПРОГНОЗИРОВАНИЕ ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА

Ключевые слова: государственный долг, внешний государственный долг, внутренний государственный долг.

В контексте экономической глобализации многие страны мира подают заявки на экономическую трансформацию во внешние источники финансирования. Государственный долг является одним из важнейших бюджетных мер, способ-

ствующих экономической войне государства. Государственный долг является мощным неинфляционным источником финансирования дефицита бюджета. Проблемы управления государственным долгом имеют особое значение на 2007-2009 годы. В контексте глобального финансово-экономического кризиса, когда политики, ориентированные на политику, в ситуационном и долгосрочном управлении долгом в отдельных странах были нацелены на достижение максимального эффекта, эти страны рискуют нарушить финансовую систему и дефолт государства. Проблема управления внешним долгом является более острой и перспективы развития экономики, а также перспективы сохранения своих позиций в глобальной экономической системе от него.

LUSINE ARAKELYAN

STATISTICAL ANALYSIS AND FORECASTING OF PUBLIC DEBT

Key words: public debt, external public debt, domestic public debt.

In the context of economic globalization many countries in the world are applying for external funding sources implementing economic transformations. The state debt is one of the most important budgeting measures contributing to the implementation of the state's economic strategy. The state debt is a powerful non-inflationary source of funding for budget deficit. The problems of public debt management have been of particular importance for 2007-2009. In the context of the global financial and economic crisis when the policy of targeted and short-term debt management in separate countries has been built, these policies have put them in the real danger of disrupting the state of the financial system and the state's default. The problem of external debt management is more acute and prospects for the development of the economy, as well as the perspective of maintaining its position in the global economic system from it. The issue of the external debt management of the RA is more acute and remarkable both in terms of the prospects of the national economy development and for the maintenance of its positions in the global economic system.

ՄԵՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Միջազգային տնտեսական
հարաբերություններ, մագիստրատուրա,
1-ին կուրս

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. փոքր բիզնես, տնտեսության զարգացում,
ՓՄՁ, փոքր բիզնեսի զարգացում, փոքր ձեռ-
նարկություն, զարգացման հիմնախնդիրներ

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում գործող փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը կարևոր նշանակություն ունի երկրի առաջընթացի համար: Նրա ազդեցությունը յուրաքանչյուր երկրի հասարակական և տնտեսական խնդիրների լուծմանն ուղղված նպատակների կազմավորման գործում պահանջում է պետության կողմից շարունակական վերահսկում և վերջինիս գործունեության վրա ազդող բազմաթիվ գործոնների վերլուծություն: Սա կարևոր հիմնախնդիր է նաև ՀՀ տնտեսության համար, ուստի մեծ ուշադրության է արժանի: